

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|---------------------------|--------|
| Պուշկարիոյ համար | 12 ֆր. |
| արեւիկի վեցամս'այ | 7 " |
| Արսասահմանի համար սարեկան | 15 ֆր. |
| վեցամսայ | 8 " |
| Աւերիկայի համար | 3 սյ. |
| սարեկան վեցամսայ | 1.50 " |

Ծանուցում տողը ու ռուբլի երեսին համար 40 սանթիմի իսկ վերջին երեսին համար 20 սանթիմի է: Իրեֆին աւելի սանթիմերու համար 20 0/0 զեղը կը լայն:

Վառնայի համար ձեռք 40 սանթիմի է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՒԹԻՆ. ԲԱԶՆԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՄԱՐԿՈՒԹԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

R. P. Kalemian
(Antenne)
W. 4.
Mischbacherstrassengasse
Vienna

մակ է գրամ
կն խմբագրութեան
հասցէին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjoun"
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար
ձեռք 15 ՍԱՆԹԻՄ
Արսասահմանի համար
ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեն
տրուիր

ՇՈՒՐԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃԵՆԿԻՆԸ ՊԷՏԻ Է ԿԱՆԿԻԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆՆԷՆ ԵՐԱՆ-
ԽՈՒՈՐԸԱՆ ԱՅՁՅԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱ-
ԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տոմսակ գնել փափաքողները կրնան
իրեն դիմել:
Զար-Պորթս փողոց Վառնա

ԺՕՐԻՍԻ ՆԵՐՈՒՍԸ

Ի՛նչ անցեալ թուով հաղորդած էինք թէ Սուլթանը որոշած է ներում շնորհել ժօրիսի, որ ինչպէս յայտնի է, մահուան գատապարտուած էր իր կեանքին գէմ եղած մահափորձին առթիւ:

Շնորհուելիք այս ներումը անշուշտ դիւանագիտական խաղ մըն է, ինչպէս ամէն մարդ ալ կը հասկնայ արդէն, գուրսել լելու համար այն անելէն, ուր ինկած էին Սուլթանը մէկ կողմէն և Պելճիգան ու իր միջոց գային խնամակալները միւս կողմէն:

Խնդիրը վեհապետի մը կեանքին գէմ եղած գաւազրութեան մը մասին էր, և որքան ալ անուանարկուած ոճրագործ մը, ապացուցուած գազան մը ըլլա՞ր ան, վեհապետի անուն էր որ կը կրէր վրան վերջապէս: Այս հանգամանքը բաւական փափուկ գրութեան մէջ գրած էր թէ՛ Պելճիգան, յայտնի իր պահպանողական հակումներով, և թէ՛ միւս եւրոպական տէրութիւնները, որոնք անհուն խորշանք մը ունին միջոց այդ կարգի գաւազրութիւններու հանգէպ, ի՛նչ քաղաքական ձգտումներով ալ գործադրուած ըլլան ատոնք, և որոնք, իրենց կարգին, արհաւիրքն ունին կամ ունեցած են իսկ անձնապէս հանգունատիպ գաւազրութեանց զո՛հ ըլլալու օր մը:

Եւ սակայն հոյակապ իրակա նութիւն մը կար անդին, ամ

բող 15 տարի աներեւակայելի տանջանքներ ապրած մարտիրոսացի ազգի մը անհերքի իրականութիւնը, որ սուլթան Համիտի ոճրագործ ձեռքերով յառաջացած էր, և որ Սուլթանին փաստաբաններուն լեզուն կը կարկէր, կը պապանձեցնէր անոնց ամենէն պերճախօսներուն բերանը: Աւ Սուլթանը գուցէ երբէք այնքան սրտանց զղումը չէր ունեցած իր հայ ազգին գէմ նիւթած ահաւոր ոճիրներուն, որքան այն օրը, այն վճռական ժամը, երբ, անճրկած, դիւանագիտութեան ճնշումներուն տակ, ստիպուած եղաւ որոշում տալ իր իսկ կեանքին դէմ յայտնապէս գաւազրութիւն սարքող անձ մը «ներման» արժանացնելու, այսինքն թող տալու որ, իր գարշելի գոյութեան վերջ տալու փորձն ընող մէկը, փառաւորապէս նաւը նստի ու ելլէ իր գործին երթալ, նոյնիսկ իր թոյլտուութեամբ, ներքնապէս համոզուած ըլլալով հանդերձ թէ կամայ ակամայ պիտի քաջալերած ըլլայ այն անձերը որոնք, ապահով իրենց ազատութիւն, օր մը պիտի գան կրկին ուրիշ փորձ մը սարքելու, ու այս անգամ յաջողելու հաստատ մտադրութեամբ անշուշտ:

Բայց ուրիշ խնդիր մը կը ջըցուի մեր առջեւ:

Արդարեւ, ի՛նչ պիտի ըլլան, միեւնոյն փորձին առթիւ և գուցէ առանց ու և է իրական մասնակցութիւն մը ունեցած ըլլալու, մահուան գատապարտուած մէկ քանի հայերը, տխուր ու անգիտակից գործիքները այն անմարմին ձեռքերուն, որոնք գիտեն վերջին րոպէն լքել անպաշտպան իրենց վստահողները, ու փախչիլ միասին գործելու և միասին մեռնելու սուրբ(°) ուխտը հանդիսաւորապէս ընելէ ետքը, ի՛նչ պիտի ըլլան, կը հարցնենք, մարդկօրէն անբեւակայելի ու քստմնեցուցիչ տանջանքներու ահաւոր բովէն անցնելէ ետքը, ամիսներէ ի վեր

մութ, խոնաւ ու աղտոտ գետնափոր զնտաններու մէջ բանտարկուած այն թշուառները որոնք մինչեւ այսօր հազար անգամ մեռնիլ բաղձացած են ապահովապէս: Սարսափելի չէ՞ երեւակայել որ, այն օրը երբ ժօրիս, շնորհիւ իր Պելճիգանի հանգամանքին, նաւը նստած իր հայրենիքը կը մեկնի, միեւնոյն օրը անմեղ հայերը, որոնց յանցանքը միմիայն հայ ըլլալն է, ներքեւ Սուլթանին կեանքին գէմ գաւազրները, կամուրջին գըլուխը մահուան պարանջ վիզերնին, օդին մէջ առկալս, իրենց հոգին կաւանդեն մահուան ամենէն անագորոյնով: Աւ գուցէ ժօրիս, իր շոգեմաւին վերնայարկէն, հոգեւորքը պիտի տեսնէ իր թուրքերան խոստովանութեանց այդ զոհներուն... Անգո՛ւթ աշխարհ, ուր տկարը գատապարտուած է միջոց զոհ երթալու, թէեւ ամենէն անկեղծը, ամենէն անձնուէրը ըլլայ իր պահարկութեանց մէջ: Վի՛քք առաջնորդողներուն գաւազրութեամբ մահաւանդ...:

Լրբութիւն է բացարձակօրէն, թողուլ որ, ժօրիսի փրկութիւնը քանի մը անմեղ ու թշուառ հայերու արիւնովը գնուի պարպապէս: Եւրոպական դիւանագիտութիւնը հոս է որ կրնայ գրապէս օգնութեան հասնիլ անոնց, զանոնք փրկել գոնէ մահուանէ, ինչպէս փրկեց եւրոպացի ժօրիսը: Դիւանագիտութիւնը կրնայ գոնէ ստիպել Համիտը, որ մահուան գատապարտուած հայերն ալ տեղ մը աքսորէ միայն, փոխանակ կախազան բարձրացնելու:

Աւ այն խանդավառները, որոնք համոզուած են թէ անխիղճ դիւանագիտութիւնը կուզէ ու կրնայ մեզի նպաստաւոր բան մը ընել, հիմայ է որ պէտք է շարժին ամենէն աւելի իրենց անկեղծութիւնը ցուցնելով, որպէս զի առաջին առնին այդ իսկական անձնուէրներու կորստեան, և ապահովապէս աւելի զբաւան գործ

մը ըրած պիտի ըլլան քան թէ Ռուզվէլթի հեռագիր մը զարնելով ի ցոյց աշխարհի:

ՇԱՐՋՈՒՄ

ԲԱՐԻՁ—ԼՕՆՏՈՆ

Ա.

ԼՈՒՊԷՆՆԷ ՅԱԼԻԻԲ

Երբ այս մակդիրը կը գնեմ նօթիս ճակատը, բնաւ չը կարծէք թէ օրուան նորածնութիւններուն վրայ խօսելու մտադիր եմ եւ խորհի՛ք՝ որ մտացած եմ նիւ-Նօրքը, որ, անշուշտ նոր, աշխարհի Բարիզին է եւ հիմ աշխարհի Բարիզին ալ յաղթանակելու մօտ:

Նպատակս քանի մը մղոն հողով եւ ծովով իրարմէ բաժնուող այս երկու հսկայ տիեզերական քաղաքներուն մէջ վերջին կարճ ժամանակուան ընթացքին իրարու ետեւէ թաւալուող դէպքերուն վրայ անցողակի ակնարկ մը նետել է:

Եւստի իր ընտրութիւնը որպէս նախագահ ֆրանսական Հանրապետութեան: Այդ ընտրութիւնը հոյակապ գաս մըն էր յետադիմականութեան եւ գեղեցիկ ապտակ մը՝ արտաւորուած միապետականներուն: Տու՛մէր, հակառակ իր քաղաքական ամուսնութեան զաւկները չը մկրտելուն եկեղեցական ծէսով եւ այլ կարգ մը ազատամիտ արարքներուն, բազմագունի անձնաւորութիւն մըն էր, միապետական ու յետադիմական հակումներով, անհատի գիմակին տակ՝ եկեղեցիի պաշտպան, սարսափելի ազգայնական եւ քիչ մըն ալ՝ աւելնտ մէկը: Այսպիսի մարդու մը ընտրութիւնը՝ որպէս նախագահ հանրապետութեան, տարակոյս չկայ որ Ֆրանսան նորանոր ձախաւեր պատահարներու մղէր, Բայց Յալիէր խաղաղասէր մէկն է, որուն օգնութեան կուգայ նաեւ տարիքը՝ որ աւելի է քան Տու՛մբինը եւ, հետեւաբար, (ներողամիտ գտնուին թող մեր ձեռքերն ընթերցողները), արիւնն ալ բաղադարաբար նուազ, փոթորկուն:

Անցած է ժամանակը՝ յիշելու հոս այն բոլոր գրուատիքները՝ որ տեղաց տեղական եւ նամանաւանդ օտար մամուլը պ. Յալիէրի հասցէին: Անոր ընտրութիւնով կապահովուէր Ֆրանսայի եօթնամեայ անխոզով յառաջդիմական վաղքը: Բայց, երբէ՛ք

պիտի չը մտնամ կոմս ազգայնական խորհրդականի մը—Դաւիթներուն է՛ն խելացին, տարակոյս չկայ.—մէկ հեռագիրը Օրլէանի դուքսին ուղղուած, նոյն ընտրութեան օրը ի վերստի, որով կսկիծը յայտնելով այն իրողութեան դէմ որ արքայական պերճալուք պալատին մէջ ռամկենի հաւաքուած՝ ռամկի մը ձեռքը կուտան միլիոնաւոր ժողովրդի մը ճակատագիրը, կը վերջացնէր հեռագիրը սա թելադրիչ պարբերութիւնով, որ, եթէ վիճակի յիմարանցի է՛ն փախուկին ալ ականջը հասնէր, վստահ եմ սր կուշտուկու թեքի մը տեղի կուտար—«Բայց եւ այլպէս, պիտի չը դադրիմ գոչիլէ—կեցցէ՛ արքան»։

Կը տեսնէք թէ, դեռ այս պահուս իսկ, կան երազողներ, որ օրին մէկը նորէն պիտի ճաշակեն Լուդովիկոսեան պերճանքներ, նափօլէօնեան շուտանքներ, տխրոս դիրք աստիճան, ականակու ու նշաններ՝ իրենց ամխակու չուլթեան սեւութիւնը պարտկող...

Հակառակ անցեալ ամսուան ընտրութեան, ներկայ ամսոյ 18 ին էր որ տեղափոխուեցաւ Ֆալիէր իր պաշտօնական պալատը, էլիոնէ, ըստ Սահմանադրական օրինաց։

Որպիսի՞ պարզութիւն, որպիսի՞ հոյակապ պատկեր...

Այն Լուզէն, որ դեռ ասկէ քանի մը ամիսներ առաջ Եւրոպայի է՛ն պերճ պալատներուն մէջ որպէս զինք հիւրընկալող վեհապետներուն հաւասար՝ կը մեծարուէր, այսօր, Ֆալիէրը կողքին, հանդարտ ու մշտապիտ արտայայտութիւնով մը, կիջնէ էլիսէի սանդուխներէն վար, կը դառնայ հեղ մը եւս այն հոյակապ ապարանքին՝ ուր անցուց կեանքի եօթը քաղցրագոյն ու դառնագոյն տարիները, կը մանէ իրեն սպասող բաց լանտօն եւ, նոր նախագահին ընկերակցութեամբ, կուղղուի իր լոկի Տանդէ փողոցին արաւթմանը, հազարաւորներու բազմութեան մը ան վերջ ու խանդավառ շնորհաբերութեամբ մէջէն, եւ ժամ մը առաջուան քառասուն միլիոն կառավարող նախագահը կը լլայ պարզ քաղաքացի մը։

Է Տ Վ Ե Ր Ո Ւ Օ Լ Ս .

ԿԱՐՍԻՐ ԷՋԵՐ ՑԱՐԻՉՄԵՆ

• ԿՕՏԱՐԻՆԷ ԿՐ ԶՕՄԵՆ

Երբ քան մը ուզէր Պետրոս, ձեռք կը բերէր զայն։ Կեղծ ձեւակերպութիւններ չուէր ան.—կը պահանջէր՝ ինչ որ կուզէր. թէ որ տրուեցաւ, շատ լաւ. իսկ եթէ մերժուեցաւ, ինք անձամբ կառնէր զայն։ Իրեն ժամանակակից ճամբորդ մը շուարած էր՝ տեսնելով որ ռուս ազնուականութիւնը արժաթեղէններ կը գրպանէ իր սեղանին վրայէն։ Քաղաքակրթուած երկիրներու թագաւորներէն մէկը՝ որ Պետրոսը կը հիւրընկալէր, ապա չէր նկատելով որ միապետը—որ իւր հիւրն էր—կիւրացնէր անգին սաթի տուփ մը որ կը պատկանէր հիւրասիրողին։

Անցած մը, այցելութեան մը միջոցին Պետրոս, Պետրոս մեծ տեսնելով զգաց սուզեցնի մոսիաներէն մէկուն համար և խնդրեց զայն։ Հակիչը յարգականօրէն այլ եւ վճողարար

Լուզէի նախագահական շրջանը թերեւս է՛ն տազնապալիցն ու է՛ն փոթորկալի էր հանրապետութեան, բայց ան, իր խոհմ ու հեռահայեաց ընտրութիւնով յաղթեց ամէն խոչընդոտի։ Այսօր, Անգլո-Ֆրանսական համաձայնութիւնը Ֆրանսագիր կը պարտին իրենց նախագահին պատկառելի ալիւոր մօրուքին, որուն թողած տպաւորութիւնը Լուստոնցիներէն շատ քիչերը մոռցած են։ Անոր շնորհիւ էր Իտալիոյ, Սպանիոյ եւ Բօրթուգալի հետ բարեկամական կապերու սեղմութիւնը, եւ, այս ամէնէն յետոյ, ան ամբացուց նաեւ Ֆրանսայի յառաջադէմ շէնքին խախտող սխնեքը։ Մեծագոյն գործերէն մէկը չէ՞ արդեօք տէրութիւնը պորտաբոյժ կղերականութեան բուռն ազատելը։

Իրաւ է որ Լուզէ շատ բան չըրաւ տառապող ազգութիւններու ճակատագիրը բարելաւող։ Բայց, ընդունեցաւ մեր կաթողիկոսական պատուիրակութիւնը՝ որ բան մըն է ու պահանջկոտ շրջանք. այդ ալ բաւական էր, թէպէտեւ, «տեղէ քանի մը ամիս վերջն ալ հեռագիր կուտար կարմիր ձիւաւրին՝ անոր նախախնամական ազատուը շնորհաբերով։ Սակայն ի՞նչ ընել աշխարհի օրէնքն է դա.—հետեւաբար, կը ներենք իրեն, եթէ կը կարօտի ներումի։

(Շարունակելի)

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՌ ԱԿԱՆ ԱՐԱՐԻՒՆ, ՀՅՆԻՆԱԿԱՆԻՐՈՒՆ

ԸՆԴՀ. ԴԱՏԱՍԱԶԻՆ ՃՍԻԸ

(ՍՄանգու մէր-էֆեբարօն քաղաքում)

(Շար. 790 թ/ւէն)

Կուով սա պարագային թէ իրենց գործած ոճիւր քաղաքական հանգամանք ունի՞ թէ ոչ, ըսենք թէ ճշմարտ է որ ասոնց կարգ մը յեղափոխական ծրագիրները եւ՝ զիտում-

ները քաղաքական նորօրինակ գոյն մը կը պարզեն, բայց իրողութիւնը այնպէս չէ։ Ամբաստանեալներուն բոլոր խռովարարական գիտումները ծրագրային վիճակի մէջ մնացած են. միայն եղեռնը զոր կրցան գործել Սէլամըքի արտոգութեան վայրը կառքով պայթուցիկ փոխադրել եւ հոն պայթում մը առաջ բերելով ծանօթ թուով անձերու սպանման եւ վիրաւորման պատճառ ըլլալին է։ Իրենց այդ եղեռնական արարքն ալ մտադրուած խռովայնջ նպատակը առաջ չէ բերած, եւ շնորհիւ վեհ. կայսեր, իրենց այդ լանթմաւարտ նպատակը ամբողջովին ամուլ մնացած է։ Հետեւաբար ոճիւր բուն հանգամանքը ճշգրտու համար նկատու առնուելիք եւ վերլուծուելիք իրաւագիտական կէտը այն քաղաքական սեւակէտը չէ որ ոճիւր հաւանական հետեւանքը միայն կրնար ըլլալ եւ որ սկզբամբ եւ հիւսիսին ծրագրային վիճակի եւ ամբաստանեալներուն երեւակայութեան ու ցնորքին մէջ մնայ։ Ընդհակառակը բուն ոճիւր այն է որ պայթուցիկ նիւթը Սիլամըքի բարձրագոյն վայրին մտնեցուցած. հոն մտնեցած, եւ անոր պայթումին հետեւանքով այնչափ մարդոց մահուան պատճառ եղած են եւ այսպէս ժողովուրդը ահ ու սարսափի մէջ ձգած են, ինչ որ անխնայութեան միակ գեոնաքար նպատակն է։

Ճէր նախագահ, ինչպէս ամէն տեղ, ամէն երկրի օրէնքներուն եւ ընդհանուր օրէնքներուն առջեւ յայտնի է, սխալ եւ անօթ է քաղաքական նպատակ վերագրել բոլոր մարդկութեան համար փորձանք եւ մեծ վտանգ մը հանդիսացող տինամիթիներու, պոսպածիներու, հրքիւններու եպրելի եւ վայրագ արարքներուն։ Հետեւաբար, ասոնց գործած վտանգները պարզ ոճիւրներու եւ ստորին եղեռնագործութեանց կարգէն ըլլալով, ըստ օրինի պարտականութիւն կը համարու այդ կէտին վրայ հրաւիրել պատկառելի մամուլը ու շարքութիւնը, և յանուն հանրային իրաւանց, կը պահանջեմ որ ամբաստանեալներուն իւրաքանչիւրը նկատուելի որպէս պարզ քաղաքացի եւ յարգանք մատուցանել իր բարձրացուցած ցարին։

Կըսուի թէ Պետրոս զիմեց՝ ոյն կեղծ ցարին՝ ծովակալութեան աստիճանի յառաջացման համար և խընդիրքը մեթոնեցաւ.—ինչ որ հանցուցող զինքը։

Կուզէր ընկերակցութիւն. Ուստի մէկիկ մէկիկ կանոնէր իւր թագաւորութեան է՛ն սիրուն կիները, և մէկիկ մէկիկ քանի որ չէին գոհացներ զինքը, կը թողուր գտնոնք։

Սովորութիւնն էր այդ օրերու՝ որ երբ Յար մը կին ընտրէր արքունական պաշտօնեաները զիմում, ներ հրաւիրէին թագաւորութեան կիներէն։ Հազարաւոր կը զիմէին ու կենթարկուէին է՛ն խիստ ու գաղտնի քննութեան։ Ասոնց լաւագոյնները կը տարուէին պալատ, ու հոն, երկար, նեղ սենեկի մը մէջ, կը պահուէին։ Գիշերը, երբ քնադած են ծարր կը շրջէր իրենց տնկողինները զատող նեղ անցքին մէջէն ու ննջողներէն իր հարսը կընտրէր։ Պետրոս արդէն առած էր կին մը ու մէկ կողմ նետած զինի։

Նոյն իսկ աւելի անկիրթ մեթոտ

իւրը հարցաքննուի, վկաներ լսուին, եւ միւս ապացոյցներուն քննութեամբ դատաւարութիւնը կատարուի։

(Շարունակելի)

ԹՈՒՐԻՔԸ ԹՈՒՐԻՔԻՆ ԴԵՄ

Ձուրցերիական թերթի մը մէջ այս վերնագրով հետեւեալ դատական քրոնիկը կը կարդանք.

«Անցեալ մարտ ամսուն, նամական պաշտօնեայ մը անունի նմանութեան մը շփոթելով, ժընէվի օսմ. հիւպատոս Հասան Հոյտար Բէչատ պէյի տուփին մէջ կը ձգէ նամական մէկ վեկոյցը, որ կը ծանուցանէր թէ Իզմիրէն ապահովագրեալ նամակ մը հասած է իրեն։ Օսմ. հիւպատոսը այս վեկոյցը ի ձեռին կը ներկայանայ նամակատուն և ապահովագրեալ առարկան կը ստանայ. բայց երբ կը բանայ զայն, կը տեսնէ որ անոր քան տէրն է Ալի Հայտար Միթհաթ պէյ աւուն թուրք փախտական մը։ Անմիջապէս թէյէֆօն կրնէ այս երիտասարդին, որ սպանեալ Միթհաթ փաշայի օրդին է եղեր. ժամագրութիւն մը որոշելով օսմ. հիւպատոսը տեսակցեցաւ նամակին բուն տէրոյժ հետ և անոր յանձնեց 1. պահարան մը՝ որ Գրէտի Լիօնէի վրայ քաշուած չէք մը կը պարունակէր. 2. պղտիկ քառթ մը, թուրքերէն լեզուով, որուն մէջ քէօն թիւրքերէն քոյրը բարեւ կը զրկէր իրեն.—Բայց Միթհաթ բաշայի օրդին չգոհացաւ ասոնք ստանալով, ոչ ալ հիւպատոսին ներում խնդրելովը. ան-

մը հնարեց ան ընտրելու իւր սպորինի յաջորդները կուգային—երկար շարքով մը—կը մնային ատեն մը ու կը հեռանային. ոչ մէկը կը հանցուէր զինքը։

Թէ որ ունենար կատարնէ՛ երկրորդի հոգին, կը հեռացնէր գանոնք լաւ թոշակով մը, սակայն, որպէս յաւելում իւր միւս մոլութեանց, վստագի էր ու կծի. նաուրիդ մը՝ որ իւր կեանքը փրկեց փոթորիկէ մը ձերմակ ծովուն վրայ, վարձատրեց երեք տկիով։

Իր այս անցողակի սիրուհիներէն մէկն էր Մէրի Հէմիլըն—սկովտական ծագումն ուսումը և պատուոյ տիկին։ Մէրի Հէմիլըն սպանեց իւր գաւկըները՝ որպէսզի ամօթը չը հասկցուի—դա գէշ էր. նոյնպէս եւ ցարը կողոպտեց—դա անտերտի էր։

Մէրի Հէմիլըն բարձրացաւ կառավարաներէն։ Եսպիտակ մետաքսէ շրջագեցստով՝ սեւ ժապաւէններով եզրուած։ Սա Պետրոսի յղացումն էր։ Տեսարանին թատերական կողմը շահարգոնց զինքը ու ներկայ էր գըլխատման, գրկելով դատաւարանալ տիկինը կառավարանին տակ և թելադրելով զէնի ազօթելու Այսպէս տա-

միջապէս նամակ մը ուղղեց Ձու... Իցե՛րիոյ նամակատանց տեսչու... Թեան, որով կամբաստանէ օսմ...

Խնդիրը դատարանի ինկաւ և վճիռը փետր. 8ին պիտի տրուէր (Կատ Բեմ)

ՏԵՂԵԿՍԼ ԾՄԻՏԻ ՈՐԴՈՅՆ

Մ Է Կ Ն Ա Մ Ա Կ Բ

Էվկէնիոյ Եմիտ, «Օջագով» զը... րահանաւին ապստամբութեան հերոս...

Ահա այն նամակը.

«Նկատի ունենալով «Նօյօթ վրէժիտ» լրագրին մէջ, տեղեկալ Եմիտի կնոջը...

րաւ կինը կառափնատին ու նշան տուաւ զահիճին... Ապա Յարը բարձրացուց կարուած գլուխը...

Այլ կիներ խուսափած են ւոյն մարդակեր ճիւղէն նուազ վնասով իրենց գլխուն՝ քան իրենց պատուոյն...

Կիտակցութիւնը, թէ ես այս անգին—ինձ համար—մարդու մասնիկն եմ, անոր մէկ անբաժան մասը...

Ինչու ցաւ չեմ զգար երբ այս ասղերը կուզեմ մօրս: Ես իմ արտի զգացած ցաւը չեմ կրնար բացատրել, երբոր կը կարգամ անոր յօգուածները...

ԹՈՒՐԳԻՍ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՍ

Յայտնի է թէ Բարիզի օսմանեսն դեսպան Միւնիք փաշայի վերջերս Պուլկարի այցելութիւնը քաղաքական հանգամանք կը կրէր...


Թեանց, ու կարող էր քննութիւլ իր կինը և ծեծել էնոր պատուոյ տիկինները...

Մայրն ու անուանական հայրը մեռան, ազնուազարմ Լիվօնիացին ուրացաւ զէնի ու կատարինէ սնուեցաւ վարժապետ քարոյչի մը ընտանեաց մէջ...

Թանը մակեդոնական յարժուներու վերսկսում մը կարծած էր տեսնել յառաջիկայ գարնան, և այդ պատճառաւ ալ Միւնիք փաշան զրկեց...

Հետեւաբար Միւնիք փաշայի պաշտօնը լոկ բացասական հետեւանք կրցած է ունենալ: Միւնիք բանակցութիւններ ըրած է թէ և պուլկար կառավարութեան հետ նորագոյն յեղափոխական պատրաստութեանց վերայ...

«Ինձի կրմացնեն թէ Սօֆթաներ ձեր մէջ կը պտտին, ինքզինքնին օսմ. կառավարութեան ներկայացուցիչ ձեւացնելով եւ ձեզի կը յորդորեն որ գօղիէք: Գիտցէք որ այդ մարդիկը պաշտօնական հանգամանք չունին...



Երբ կատարինէ կայսրուհի դարձաւ, զտաւ իւր նախկին ամուսինը ու թողալու որեց գանի:

Լիվօնիայի կոնիւր բերաւ կատարինէն բանակատեղին՝ որպէս բարեկամը անպաշտօն օֆիցերի մը՝ որ կը ծեծէր զինքը: Իր բարձրացող աստղը աստիճանորդեց զինքը զօրավարին վրայ...

Կատարինէ սկսաւ օգտակար հանդիսանալով, դարձաւ ունակութիւն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Եւ որովհետեւ Սուլթանի խոստումները դեռ եւս անգործադրելի կը մնան, ու արքունի զինուորական կուսակցութիւնը կը շարունակէ ընդդիմադրել...

Ալպանիայէ հասած լուրերը շատ վրդովեցուցիչ են: Իբէքի մէջ ծագած յեղափոխական շարժումը մինչեւ Տեագովօ տարածուած է և կը վախցուի թէ՛ չըլլայ որ Միդրովիցի ալպանական բնակչութիւնը, որ շատ յուզուած վիճակ մը ունի, նոյնպէս ապստամբի:

Սակայն ուղարկուած զօրազիններուն յանձնարարուած է թէ՛ չըլլայ որ զինուորական շափեր ձեռք առնեն, այլ ջանան խաղաղ կերպով բնակչութիւնը հանդարտեցնել, իսկ այս նպատակին կարենալ հասնելու համար, գործածեն ամէն միջոց:

Տաճկական կառավարութիւնը, Մակեդոնիոյ և Ալբանիան պօլսոյ կուսակալութեան բանակին համար պէտք եղած հրանիւթի, հրազէնի և զգեստեղէնի հայթայթումը աճուրդի դրած է: Ենթադրուած է թէ փութեւնը կատարուելու են: Հրազէնի և հրանիւթի մթերանոցներու մէջ մեծ գործունէութեւն կը տեսնուի:

Միւնիք փաշայի պաշտօնը լոկ բացասական հետեւանք կրցած է ունենալ: Միւնիք բանակցութիւններ ըրած է թէ և պուլկար կառավարութեան հետ նորագոյն յեղափոխական պատրաստութեանց վերայ...

Կըսուի թէ ըոյր այս ժամանակը կատարինէ Մեշիքովի գաղտնի կինն էր. բայց, քանի որ ամուսնալուծուած չէր երբէք նախորդ ամուսնէն, չուէտացիէն, այս պատմութեան ճշմարտութիւնը հպիւթէ արժանահաւատ ըլլայ:

Թէ որ աստիճան բարձրացաւ էն Պիտրոսի աչքին՝ կրնայ տեսնուիլ այն իրողութենէն՝ որ իւր Մօսկուայէ հեռացման պահուն՝ զէպի ուղիով յարանգնեց թողուց 3000 ռուպլի շնորհել կատարինէի՝ եթէ հակառակ պարագային մեռնի ինք:

(Շարունակելի)

թիւն կը տիրապետէ: Հունգարիոյ մէջ շատ մը ձիեր կ'ըզնուին, որոնց յանձնումը շատ շուտ ըլլալու է:

Ամսոյս 22ին, գետերու վրայէն անցնելու համար շարժան կամուրջներու որոշ քանակութիւն մը յանձնարարուած է, այս կամուրջները Մակեդոնիոյ համար են, անոնք ամենակարճ ժամանակամիջոցի մը մէջ պէտք է որ Սելանիկ յանձնուին:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Մագսիմ Գալաթիսի իմբարգրութեամբ հրատարակուող «Կրթական» անուն նոր լրագիրը կը հաւատոյթ թէ՛ ամսոյս 2ին Յարը հրամանագիր մը ստորագրած է, որով մինչեւ այսօր մահուան դատարանուած քաղաքական յանցաւորներու դատաւճիռը կը փոփոխէ:

— Մոսքովայէ կիմացնեն թէ՛ Պլանզով բանտին մէջ կալանաւորները ըմբոստանալով, բանտապետը սպաննեցին, իսկ անկէ ետքը ինչ որ գտեր ու անցեր է ձեռքերնին անոնցմով պահակին ու կառավարիչներու վրայ յարձակեր են: Զինուորներէն 8 հոգի մեռեր է: Մոսքովայէն գունդ մը զինուոր ուղարկուած է ապստամբները զսպելու համար:

— Գրագէտ Մաքսիմ Կորքին յաջողած է ուսու կառավարութեան հետապնդումներէն ազատիլ, և Գրեքնիակ հասնիլ: Ժամ մը առաջ կուզէ եղեր Բարիզ մեկնիլ, սակայն իր հիւանդութիւնը որ բուսական սուր կերպարանք առած է, արգելք կ'ըլլայ իրեն կը հետեւին 5 ուսու փոխտակաւորներ: Տանիական կառավարութիւնը մինչեւ Պրանսա միկնիլը աշաւորջ կը հսկէ վրան:

— Իրկաէն կը հաղորդեն: Զինուորական ատեանը ի վան Պէլիին անուն 9 տարեկան տղան մահուան դատապարտեց, որպէս թէ նա սպաննած ըլլայ երկու գողաքներ:

ՅՐԱՆՍՍ

Պրանսական դահլիճին մէջ, որ այժմ 1906 ասրուայ պիտոճէին քննութիւնը կը կատարուի, յանկարծակի նախարարական տագնապ մը ծագած է: Պրանսական հիւսիսային նահանգներու մէջ, եկեղեցական գոյքերու ցանկը պատրաստուած ժամանակ, պատահած միջադէպերու մասին երբ խօսք կ'ըլլայ, Բուվիէն, երեսփոխան Բէրէի կողմանէ առաջարկուած վստահութեան օրտկարգը կընդունի, որով կառավարութեան այս մասին ըրած յայտարարութիւնը կը վաւերացնէր եւ զայն կը հրատարակէր օրէն:

Քը անվթար ու առանց սեզի տալու գործարարել: Բէրէի այս առաջարկը դահլիճը 267 ձայնով ընդգէժ 234 ի շընդունեց: Բուվիէն անմիջապէս բոլոր նախարարներով միասին ձգեց դահլիճը ու հեռացաւ, յայտարարելով, թէ այլ եւս կառավարութիւնը չը հետաքրքրուիր ըլլալիք ընդգիծարանութիւններով: Երեսփոխանութեան նիստին վերջանալէն ետքը, նախարարական խորհուրդը, արտաքին գործոց նախարարութեան մէջ ժողով գումարեց, ասկէ ետքը Բուվիէն եղիսեան պալատը գնաց, և Յուլիէրին մատոյց ամբողջ նախարարութեան հրամարականը:

Հանրապետութեան նախագահը, նախարարներէն խնդրեց որ վերապահեն իրենց գիրքը ընթացիկ հարցերու մասին հսկելու համար:

Կը կարծուի թէ Բուվիէն փոխանակողը Պարթուա և Բուանգարէն պիտի ըլլաւ:

ՍԵՐՊԻԱ

Աւստրո—Հունգարիոյ հետ կնքուելիք վաճառականական դաշնակցութեան պայմանները (որ այս կառավարութիւնը Սերպիոյ կառավարիչէ) շատ նուստացուցիչ ըլլալուն համար, արգի սերպ նախարարութիւնը նախաձեռար համարեց իր հրամարականը տալ, քան թէ վստայիսի ծանր պատասխանատուութիւն մը ստանձնել:

ԱՆԳՆԻԱ

Մատրիտէն կիմացնեն թէ՛ անգլիական նաւատորմի մը, որ կը կայանայ երկու մեծ զբահանաւէ և շորս սուղանաւէ, ձիւրալթարի առջեւ ելեցած է, կը կարծուի թէ՛ Գաղղիոյ փոփաքովն է որ Անգլիան այս նաւացոյցը կընէ, Գերմանացիներուն վրայ ճնշում բանեցնելու նպատակով:

— Իտալական «Խորիպունա» լրագրին Ալթէլիբասէն հը հեռագրեն թէ՛ Անգլիոյ և Սպանիոյ թագաւորները երբ մօտ օրէն Պիարիդց տեսնուին, հոն երկու կառավարութիւններու միջեւ կնքուելի յառաջիկայ նիդակակցութեան մը հիմունքը պիտի դնեն:

ՄԱՐՈՒՐ

Այս հարցի մասին իրարու հակասող շատ մը լուրեր կը հասնին, որոնցմէ դեռ եւս բան մը չէ կարելի եղբակացնել, միայն կը կարծուի թէ Ֆրանսական դահլիճի փոփոխումը ուրիշ կերպարանք մը տալու է գործերու ընթացքին:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

«Էգօ տը Բարի» լրագիրը Պէրլինէն ստացուած հեռագիր մը կը հրատարակէ, որուն նայելով, հոն քաղաքական շրջանակներու մէջ լուր կը շրջի թէ՛ Պիւլով և Հոլլանդի տալու են իրենց հրամարականը:

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հունգարական միացեալ կուսակցութիւնները յատուկ կոչով մը կը դիմեն ազգին, որով կը յայտարարեն թէ՛ Պրանց—Եօզէֆը միայն բանակին տեսակէտով չէ որ արձակած է երեսփոխանութիւնը, այլ ուզած է նոյն իսկ տնտեսական խնդիրները ազդիլն որոյնչու իրաւունքը ոտնակոխ ընել, որովհետեւ վաճառականական դաշնակցութիւնները օրէնքի տեղ կընդունուին և իրենց նշանակութիւնը կուենան միայն երեսփոխանութենէ ընտրուելէն ետքը: Իր հրատարակող միացեալ կուսակցութիւնը, առանց քաղաքական գաղափարի խտրութեան, ամենուն ալ կոչ կընէ, կառավարական ապօրինութեանց դէմ դնել վերջապէս սահմանադրութեան պահպանումը և գործադրումը պահանջել: Ընտրողներուն ուղղած բաց նախախ մը մէջ, կոմս Բնտրաչին աւելի խիստ կը խօսի Մեկնած ժամանակին բոլոր երեսփոխանները, երեսփոխանութեան նախագահ Ենուտը բարեւեցին, այս այն անձն է որ շատ խիստ կերպով կառավարութեան վրայ յարձակեցաւ:

ՍՐԱՀ «ՊՈՒԼԿԱՐԻԱ»

ՄԻԱՅՆ ՄԵԿ ՆԵՐԿԱՅՍՑՈՆԻՄ
Հայ «ՈՐԻԱՆԹԱԼ» թատերախումբն քաղաքս հասած ըլլալով «Պուլկարիա» սրահին մէջ Տէր և Տիկին Յակոբեաններու տնօրինութեամբ պիտի ներկայացնէ:

Ֆ Ա Ո Ւ Ս

Տրամ 4 արար
Խիստ ծիծաղաշարժ պաւելչ
1 արար
Յետոյ Պուրկաղի ճամբով պիտի երթայ Պիլիպէ իւր ամանային շրջանը հոն անցնելու համար:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

«Երիտասարդ Հայաստանի» տպարանը Պոսթօնէն նիւ-Եօրք փոխադրուած ըլլալով կը խնդրենք մեր թղթակիցներէն, գործակալներէն եւ բաժանորդներէն, որ այսուհետեւ նախկին հասցէով ոչ մի գրութիւն չուղարկեն, այլ զրկեն մեր հետեւեալ նոր հասցէով:

Երիտասարդ Հայաստան՝ 1906, Բ. Օ. Պօքս, Մ. Ս 310, 4-դ հ Ավրենի Նիւ Եօրք—Սիդի

ՆՈՐ ՀՐՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
Ս Ա Ր Ս Ո Ւ Ռ Ն Ե Ր
Գնարական Բանաստեղծութիւնք
Ե Ր Գ Ե Գ
Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն Դ Ա Ն Ի Է Լ
Վ Ե Ն Ե Տ Ի Կ—Ս. ՂԱԶԱՐ
1 9 0 6

Փոքրիկ հատորիկ մը մերթ սիրուն երգերով, ինչպէս Հաշիշը, մոխրի ներուէն առջեւ Վեշտեւ Եւայն:

Հոյս տեսաւ ի Լօնտօն «ՊԱՏԱՆԻ» ամսաթերթի տպարանէն.
ՊԱՏԱՆԻԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐՈՅ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ. Հեղինակութիւն Բրօք. Թուսայանի: Նիւթին շահեկանութիւնը եւ հեղինակին հմտութիւնը եւ ոճը մեծ արժէք կուտան այս 670 էջեւէ բաղկացեալ և երկու հատորի բաժնուած գրքին: Գինը Պուլկարիոյ համար 4.40 ֆր. փոստով 4.80 ֆր.
ԳՐՊԱՆԻ ԵՐԻՄԱՐԱՆ, կը պարունակէ 100 հատ ընտրեալ ազգային երգեր: Գինը Պուլկարիոյ համար 1. րօստով 4.10.
Փափաքողները կրնան դիմել հետեւեալ Հասցէին
Représantante de la Revue «Badani» chez M-r Avedis Melidonian — Varna Bulgaria
Վճարումները պէտք է կանխիկ ըլլան:

ՊԱՏԱՆԻ

| | |
|--|---------------------------------|
| Գրական, Հասարակական, Փառաքական և Տնտեսագիտական | ՊԱՏԱՆԻ |
| Բանաստեղծութեան պայմանները | ՊԱՏԱՆԻ |
| Տարեկան 7 ր. | 18 ֆր. 14 ժող. 14 շիւ. 7 ղոլ. |
| Վեց ամիսը 4 ր. | 11 ր. 9 ր. 9 ր. 4 ր. |
| Երեք ամիսը 2 ր. | 7 ր. 6 ր. 6 ր. 2 ր. |
| Մէկ ամիսը 1 ր. | 5 ր. 3 ր. 2 ր. 1 ր. |
| Տարեկան բաժանորդները կարող են վճարել ամսական | Հասցէ՝ Սարգսի Պուլկարիոյ փոխով: |

ԲԱԶՄԱՎԷՊ
Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն
Ա Ս Ս Ա Գ Ի Ր
Գրական. Բանասիրական. Պատմական. Կրթական և Գիտական
63 րգ. ՏԱՐԻ
Հ ս տ ո Ր Կ Գ.
Տարեկան Բաժնեգրին է 40-Պր.
Դիմել ի հետաքրքիր ան լ ա Ր ը վ ի Բ Դ Ղ Մ Վ Է Պ Ս. Լ ա զ ա Ր Վ Է Ն Ի Ս

Печатница на П. Глушковъ С-во Вар